ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«_____» հոկտեմբերի 2009թ. N -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով `

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար Վարազդատ Մկրտչյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնող՝ Երևանի ավագանու և ՀՀԿ խմբակցության անդամ Ս.Ներսիսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի Վարազդատ Մկրտչյանը ծնվել է 1949թ. ապրիլի 4-ին Երևան քաղաքում:

Վ.Մկրտչյանի աշխատանքային ուղին սկսել է 1974 թվականին և արդեն շուրջ 35 տարի է նա աշխատում է Երևանում: 1990-1994թթ ընթացքում սովորել և ավարտել է «Երևանի տնտեսագիտական ինստիտուտ» համալսարանը և ստացել տնտեսագետի մասնագիտություն:

1997 թվականից Վ.Մկրտչյանը աշխատում է Երևանի Նորք-Մարաշ թաղապետարանում: 1999թ.-ից մինչև Երևանի ավագանու ընտրությունները աշխատել է որպես թաղապետ: Երևանի քաղաքապետի 15.06.2009թ. թիվ 6185-Ա որոշմամբ Վ.Մկրտչյանը նշանակվել է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավար:

Ամուսնացած է, ունի դուստր:

Երկարամյա ազնիվ և անբասիր աշխատանքի ու իր մարդկային բարձր հատկանիշների շնորիվ Վ.Մկրտչյանը մեծ հարգանք է վայելում Նորք-Մարաշ վարչական շրջանում: Վերջինս մեծագույնս նպաստել է Երևանում տեղական ինքնակառավարման կայացմանն ու զարգացմանը և ազնվորեն ծառայել ու շարունակում է ծառայել Երևան քաղաքին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Վարազդատ Մկրտչյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ